

Հավելված

ԵՊՀ ռեկտորի ՕՐ. ՕԿ. ՀԻ թիւ 60/45 հրամանի  
Ճ

## ԿԱՐԳ

### «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՎ» ՀԻՄԱՆԴՐԱՄԻ ԱՍՊԻՐԱՆՏԻ, ՀԱՅՑՈՐԴԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՏՄԱՆ (ՀԵՇՎԱՑՄԱՆ, ԱՉՎԱՑՄԱՆ) ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ

#### I. ԸՆԴՀԱՏՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- Սույն կարգով կարգավորվում են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) ասպիրանտի, հայցորդի (այսուհետ՝ սովորող) ուսումնառության ընդհատման (հեռացման, ազատման) և վերականգնման հետ կապված հարաբերությունները:

#### II. ՍՈՎՈՐՈՂԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄԸ

2. ԵՊՀ-ից սովորողը հեռացվում է.

1) տարեկան ատեստավորման ժամանակ չատեստավորվելու դեպքում,

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ԵՊՀ կանոնադրությամբ, Ներքին կարգապահական կանոններով կամ ԵՊՀ-ի և սովորողի միջև կնքված ուսումնառության պայմանագրով սահմանված պարտականությունները չկատարելու դեպքում,

3) ԵՊՀ-ի կողմից սահմանված ժամկետում ուսման վարձավճարը չվճարելու դեպքում,

4) սույն կարգի 12-րդ կետով սահմանված ժամկետի չպահպանման, կամ բաց թողնված ժամկետը հարգելի չճանաչվելու դեպքերում:

3. ԵՊՀ-ից սովորողը ազատվում է.

1) իր դիմումի համաձայն,

2) այլ ուսումնական հաստատություն տեղափոխվելու դեպքում:

4. ԵՊՀ-ից սովորողի ազատման իր դիմումի համաձայն չի կարող տրվել, եթե նա Ենթակա է հեռացման համաձայն սույն կարգի 2-րդ կետով սահմանված հիմքերի:

5. ԵՊՀ սովորողի ուսումնառությունը դադարեցվում է.

1) ժամկետային պարտադիր կամ շարքային և սպայական կազմերի պարտադիր գիլծառայողների՝ ծառայության ընթացքում պայմանագրային գիլվորական կամ այլընտրանքային ծառայության գորակությելու դեպքում,

2) հղության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու դեպքերում,

3) առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդ ձևակերպելու դեպքում:

6. Սույն կարգի 2-3-րդ և 5-րդ կետերով նախատեսված դեպքերում սահմանված հրամանները տրվում են համապատասխան հիմքերի և փաստաթղթերի ներկայացման պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում: Հրամանի օրինակը ուղարկվում է սովորողի համալսարանական Էլ.փոստին:

### III. ՍՈՎՈՐՈՂԻ ՈՒՍՈՒՄԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

7. ԵՊՀ-ից հեռացված կամ ազատված սովորողի ուսումնառության վերականգնումը կատարվում է ընդհատման պահից առնվազն 6 ամիս հետո՝ անկախ ուսուցման ձևից:

Սովորողի ուսումնառությունը վերականգնվում է վճարովի ուսուցման համակարգում ուսումնառության մացորդային ժամանակահատվածով, բացառությամբ սույն կարգի 2-րդ կետի 1-ին ենթակետի հիմքով հեռացման, որի դեպքում սովորողի ուսումնառությունը վերականգնվում է այն կիսամյակի սկզբից, որից ընդհատվել է:

Սովորողի ուսումնառությունը վերականգնելու դեպքում ուսման վարձավճարը հաշվարկվում է ընթացիկ տարվա համար սահմանված վարձավճարի չափով:

8. Ուսումնառությունը վերականգնելուց հետո սովորողը մինչև ընթացիկ տարվա մացորդային ժամկետի ավարտը պետք է անցի տարեկան ատեստավորում:

9. Սովորողի ուսումնառությունը վերականգնելու վերաբերյալ դիմումը ներկայացվում է ԵՊՀ ռեկտորին՝ յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 1-15-ը կամ հունվարի 15-30-ն ընկած ժամանակահատվածում աշխատանքային օրերին:

10. Սույն կարգի 2-3-րդ կետերով սահմանված հիմքերով ԵՊՀ-ից հեռացված (ազատված) սովորողի ուսումնառության վերականգնումը հնարավոր է համապատասխան ամբիոնի դրական եզրակացության (գիտական դեկավարի մասին նշումով) դեպքում:

11. Սույն կարգի 10-րդ կետում նշված եզրակացությունը ստանալուց հետո դիմումատում պարտավոր է ենօրյա ժամկետում կատարել անհրաժեշտ վճարումները (ուսման վարձավճարը, պարտքերի մարման վճարը և այլն) և ներկայացնել վճարման անդորրագիրը:

12. Սույն կարգի 5-րդ կետով սահմանված դեպքերում ուսումնառությունը դադարեցրած սովորողի ուսումնառությունը վերականգնվում է՝

1) եթե ուսումնառության դադարեցման հիմքը վերանալու պահից 10-օրյա ժամկետում սովորողը դիմում է ներկայացրել ԵՊՀ ռեկտորին,

2) մինչև ուսումնառության դադարեցումն ունեցած կարգավիճակի պահպանմամբ,

3) ասպիրանտուրայում կամ հայցորդության համակարգում ուսումնառության մացորդային ժամանակահատվածով:

Սույն կետով սահմանված ժամկետը խախտելու դեպքում սովորողը հեռացվում է ԵՊՀ-ից, եթե բաց թողնված ժամկետը չի համարվում հարգելի:

Ուսումնառությունը դադարեցրած սովորողի վերականգման պահին նախկին մասնագիտության բացակայության դեպքում ԵՊՀ առաջարկությամբ և իր համաձայնությամբ սովորողի ուսումնառությունը կարող է վերականգնվել հարակից մասնագիտությամբ, իսկ դրա բացակայության դեպքում այլ մասնագիտությամբ:

13. Ուսումնառությունը վերականգնելու մասին իրամանը տրվում է պահանջվող փաստաթղթերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում: